

## **Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

### **Կատարողական վարույթը կասեցնելու մասին**

23/09/2021թ.

ք. Եղեգնաձոր

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Վայոց Ձորի տարածաշրջանի բաժանմունքի հարկադիր կատարող արդարադատության ավագ լեյտենանտ Ա. Պետրոսյանս ուսումնասիրելով 18.08.2021թ. վերսկսված թիվ 07652445 կատարողական վարույթի նյութերը.

## **Պ Ա Ր Ձ Ե Ց Ի՝**

ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 21.05.2021թ. տրված թիվ ԱՎԴ4/0751/02/20 կատարողական թերթի համաձայն պետք է Մխիթար Նազարյանից, Նինել Բաղայանից, Կարապետ Կարապետյանից և Թամարա Գրիգորյանից համապարտության կարգով հոգուտ «ԷԿԼՕՖ ՈՒՎԿ» ՍՊԸ-ի բռնագանձել 611.372 ՀՀ դրամ և տոկոսներ, ինչպես նաև բռնագանձման ենթակա գումարի 5%-ը որպես կատարողական գործողությունների կատարման ծախս:

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Վայոց Ձորի տարածաշրջանի բաժանմունքում պարտապան Նինել Բաղայանի վերաբերյալ հարուցված է ևս թվով 4 կատարողական վարույթ, ընդհանուր 2.423.849 ՀՀ դրամ և տոկոսներ բռնագանձման պահանջով:

Կատարողական գործողությունների ընթացքում պարտապան Նինել Ֆրունզեի Բաղայանին սեփականության կամ համասեփականության իրավունքով պատկանող գույք և դրամական միջոցներ չեն հայտնաբերվել որոնց վրա կարելի է բռնագանձում տարածել:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 28.1 և 37-րդ հոդվածի 8-րդ կետով.

## **Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝**

Կասեցնել 18.08.2021թ. վերսկսված թիվ 07652445 կատարողական վարույթը 90-օրյա ժամկետով.

Առաջարկել պահանջատիրոջը և պարտապանին նրանցից որևէ մեկի նախաձեռնությամբ 90-օրյա ժամկետում սնանկության հայց ներկայացնել դատարան.

Սույն որոշումը երկու աշխատանքային օրվա ընթացքում հրապարակել [www.azdarar.am](http://www.azdarar.am) ինտերնետային կայքում.

Որոշման պատճենն ուղարկել կողմերին.

Որոշումը կարող է բողոքարկվել վերադատության կարգով որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում, կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:

**ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂ**

**Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ**